Տիրույթ	
Որակի տիրույթ	Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում
Կապ Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների պահանջներին	ՈԱԵՉՈՒ (ESG) չափանիշներ: 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.6, 2.7, 3.1
Գործողության տարիներ	2021-2025
Հաստատված	ՈԱԱԿ տնօրեն
Տարբերակ	04
Տիրույթի պատասխանատուներ	Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավար

Ռազմավարական նպատակը

ՀՀ օրենքներին, պետական հավատարմագրման չափանիշներին և ՈԱԱԿ ընթացակարգերին համապատասխան իրականացնել անկախ, անկողմնակալ և հիմնավորված ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումներ, որոնց արդյունքները ընդունելի են ՈԱԱԿ-ի բոլոր շահակիցների կողմից և նպաստում են ՀՀ մասնագիտական կրթության որակի հավաստմանը և շարունակական բարելավմանը:

Թիրախները

1. Ընդլայնել տեղացի և միջազգային փորձագետների բազան՝ ապահովելով ծրագրային և ինստիտուցիոնալ հավատարմագրումների համար փորձառու մասնագետներ:
2. Տրամադրել շահակիցներին կրթության համակարգի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:
3. Վերանայել և բարելավել հավատարմագրման գործընթացի ձևաչափերը՝ հաշվի առնելով գործընթացներում առաջ եկած դժվարությունները և շահակիցների արձագանքները (փորձագետներ, համակարգողներ, հավատարմագրման հանձնաժողով):
4. Համահնչեցնել ՈԱԱԿ կարգավորող փաստաթղթերը և ձևաչափերը՝ ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան:
5. Ապահովել հավատարմագրման շարունակական գործընթացների համար համապատասխան կարողություններով և քանակով համակարգողներ:
6. Հետևել, որպեսզի ՄՈՒՀ-երը լրացնեն ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարերը և տրամադրեն իրենց մասին բավարար, թարմացված և ամբողջական տեղեկատվություն ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ:

Գնահատման ցուցիչները

1. Հավատարմագրման հանձնաժողովի, ուսումնական հաստատությունների և այլ շահակիցների բավարարվածության աստիճանը ՈԱԱԿ-ի փորձագիտական զեկույցների հիմնավորվածությամբ, վերլուծությամբ և անկողմնակալությամբ:
2. Փորձագետների բավարարվածության աստիճանը գնահատումներ կատարելու և որոշումներ կայացնելու իրենց անկախությունից:
3. Միջազգային փորձագետների և գործընկերների դրական արձագանքը հավատարմագրման չափանիշների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի եվրոպական ուղենիշներին համահունչության տեսակետից:
4. Հավատարմագրման գործընթացների մասնակիցների (ուսումնական

հաստատությունները, փորձագետները, ՈԱԱԿ-ի համակարգողները և հիմնական գործընկերները) բավարարվածության աստիճանը հավատարմագրման գործընթացի ծանրաբեռնվածության բաշխումից, ՈԱԱԿ-ի ձևաչափերից և ստացված արդյունքներից:

5. Արտաքին գնահատողների՝ փորձագետների, բավարարվածության աստիճանը հավատարմագրման գործընթացների վերաբերյալ առկա տեղեկատվությունից:
6. Գործընկերների գոհունակությունը բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վերաբերյալ տրամադրված վերլուծական տեղեկատվությունից:

Գործողությունների նկարագրություն

Հավատարմագրման գործընթացը ընթանում է մի քանի փուլերով.

1. **Հավատարմագրման դիմում**
   Գործընթացը կազմակերպվում է ՈԱԱԿ–ի քարտուղարության կողմից:
2. **Փորձաքննության նախապատրաստում**
   ՈԱԱԿ համակարգողի կողմից ուսումնասիրվում է հաստատության կողմից ներկայացված ինքնավերլուծությունը և կից փաստաթղթերի փաթեթը: Ինքնավերլուծության ընդունման դեպքում կազմվում է հավատարմագրման ժամանակացույց, պահպանելով առանձին գործընթացների համար Հավատարմագրման կարգով սահմանված ժամկետները, և նախապես համաձայնեցվում է ուսումնական հաստատության հետ:
3. **Փորձագիտական խմբի ձևավորում**
   Փորձագիտական խումբը ձևավորվում է ըստ Փորձագիտական խմբերի ձևավորման կարգի: Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվում է հավատարմագրվող ուսումնական հաստատության հետ:
4. **Փորձաքննության իրականացում**
   Իրականացվում է հետևյալ ենթափուլերով.

- նախնական գնահատում,
- փորձագիտական այցի կազմակերպում,
- փորձագիտական զեկույցի ներկայացում,
- փորձագիտական խմբի կողմից բարելավման պլանի գնահատում:

5. **Որոշման կայացում**
   Հավատարմագրման որոշումը կայացվում է Հավատարմագրման հանձնաժողովի կողմից՝ հիմնվելով հավատարմագրումների ընթացքում ձևավորված փաթեթի և փորձագիտական խմբի և ուսումնական հաստատության հանդիպման արդյունքների վրա:
6. **Հրապարակում**
   Հավատարմագրման գործընթացի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը (վերջնական փորձագիտական զեկույց, ՈԱԱԿ-ի եզրակացության և հավատարմագրման հանձնաժողովի որոշում) տեղադրվում է ՈԱԱԿ-ի կայքէջում:

Գնահատում

1. Բոլոր շահակից կողմերի հետ հարցումներ,
2. Բոլոր շահակիցների հետ ֆոկուս խմբային հանդիպումներ,
3. Ինստիտուցիոնալ և ծրագրային բաժնի կողմից ընթացիկ մշտադիտարկումներ,
4. Հավատարմագրող հանձնաժողովի դիտարկող խմբի կողմից ներկայացված գնահատումներ:

Պատասխանատվություն

Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժին

Հաշվետվություն Տարեկան հաշվետվություն
Տիրույթը կարգավորող փաստաթղթեր *Ներքին* • Հավատարմագրման գործընթացում կիրառվող ձևաչափեր • Հաշվետվությունների ձևեր • Փորձագետների և համակարգողների հարցաշարեր • Հանդիպումների օրակարգեր և արձանագրություններ • Հավատարմագրման գործընթացի համակարգողների հաշվետվություններ • Միջազգային փորձագետների արձագանքներ *Արտաքին* • ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ • Կրթության ոլորտը կարգավորող օրենքներ • Որակավորումների ազգային շրջանակ • Ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշներ • Ծրագրային հավատարմագրման չափանիշներ • Փորձաքննության ձեռնարկ • ՈԱԱԿ-ի կայքէջ

Հաստատված՝
18.10.2021թ.
ՈԱԱԿ տնօրեն
Ռուբեն Թոփչյան